ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1146-11014

Ք. Երևան « 02» փետրվար 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի պարտականությունները կատարող՝ Լուսինե Փաշայանի, (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 1146«Հանրակրթության ծրագիր» ծրագրի 11014«Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ մինչև **126 383 600** (մեկ հարյուր քսանվեց միլիոն երեք հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված

հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագրի 2.4.7 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.1.8. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջել վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. կազմակերպությունից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման կազմակերպությանը՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.2 կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել գործող իրավական ակտերի, պետական մարմնի կողմից հաստատված կամ տրամադրված մեթոդական ցուցումների, հրահանգների պահանջներին համապատասխան,

2.4.4. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.7. մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, իսկ տարեկան կտրվածքով՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 25-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ կազմակերպության կատարողական հաշվետվությունները: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար,

2.4.8. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.9. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.10. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում, ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.12. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունների ձեռքբերումն իրականացնել աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և/կամ ՀՀ աշխատաքային օրենսգրքով սահմանված սահմանված կարգով,

2.4.13. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2026 թվականի դեկտեմբերի 25-ը, իսկ ժամանակացույցով պայմանավորված ավելի ուշ ավարտվող միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումը վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումից հետո,

2.4.14. պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում համապատասխան չափով գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում համաձայն ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ սույն պայմանագրի 2.4. կետում նշված հաշվետվությունն ընդունելուց հետո:

3.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը վճարվում է կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

6.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

6.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

6.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

6.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

6.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011005205
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» ՊՈԱԿ
ք. Երևան, Ռաֆֆի 57
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018003203
ՀՎՀՀ 01804186
Տնօրենի պարտականությունները կատարող՝

_____ Լ. Փաշայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված

2026թ. փետրվարի 2-ին կնքված N 1146-11014 պայմանագրի

Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում
Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին հեղինակային հանրակրթական ծրագրերի իրականացման համար

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Իրականացվելիք միջոցառումներ						
N N	Անվանում	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Հեղինակային հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի, այդ թվում՝ նաև նախադպրոցական, գիտափորձերի մշակման բաց համակարգի պահպանություն:	Հեղինակային հանրակրթական ծրագրերի բովանդակության, գիտափորձերի իրականացման, տարածման համար մշակումների (լրամշակման) կազմակերպում: Հեղինակային մանկավարժության թվային գրադարանի գործունեություն, զարգացում: «Դպիր» մանկավարժական բազմալեզու հանդեսի, հեղինակային	1. Հեղինակային հանրակրթական ծրագրերի՝ ուսումնական պլանների, առարկայական (դասընթացների), այդ թվում՝ ընդհանուր հանրակրթական, սովորողների ընտրությամբ, լրացուցիչ կրթական ծրագրերի լրամշակում, կազմակերպման գնահատում: Գիտափորձերի մշակում, կազմակերպում: Նախադպրոցական ծրագրի լրամշակում, այդ թվում՝ նաև 2-5 տարեկանների համար մարզական խաղերի մշակում փորձարկում, ամառային լողափերում նախադպրոցական սաների լողուսուցման ծրագրի	1. Գործող կրթական 8 ծրագրեր, 2-4 տարեկանների, 5 տարեկանների, 1-3-րդ, 4-5-րդ, 6-8-րդ, մասնագիտական կողմնորոշման 9-րդ, հետազոտական վարժարանի 10-11-րդ, 12-րդ դասարանների ուսումնական պլաններ, կազմակերպման կարգեր, հինգ ուսումնական շրջանով (շուրջտարյա) կազմակերպման ուղեցույցներ: Առարկայական դասընթացների լրամշակված ծրագրեր, կազմակերպման, ուսումնական արդյունքների ամփոփման ուսումնական մոդուլներ: 2025-2026 ուսումնական տարում ներդրված՝ բնագիտություն, տեխնոլոգիա դասընթացների մոդուլների արդյունքների ամփոփում: Նորացված ծրագրերի հրապարակում:	2026թ. ընթացքում	35 760 000

		կրթական ծրագրի ներկայացման, տարածման mskh.am բազմալեզու կայքի, ուսումնական բլոգային ցանցի պահպանություն, զարգացում:	մշակում, փորձարակում: 2. Ուսումնական օրացույցի, օրացուցային նախագծերի մշակում, կազմակերպում: 3. Հանրակրթության պետական չափորոշչով որոշված ուսումնական բնագավառների դասընթացների, նախագծերի լրամշակում՝ բովանդակության, ուսումնական աշխատանքի ձևերի, կազմակերպման նյութական, մեդիա միջավայրերի նորացման նախագծերի: 4. 2025-2026 ուստարվա գնահատման համակարգի լրամշակում, այդ թվում՝ 1-ին և 3-րդ շրջանների, 2-րդ և 4-րդ շրջանների, 5-րդ շրջանի գնահատման գործիքների, 2-4, 5 տարեկանների, 1-3-րդ դասարանցիների զարգացման բնութագրերի, 4-5-րդ դասարանցիների ուսումնական առաջադիմության բնութագրի լրամշակում, 6-8-րդ, 9-րդ դասարաններում ուսումնական առաջադիմության գրանցման, 10-11-րդ, 12-րդ դասարաններում,	2. Ուսումնական տարվա, ուսումնական շրջանի, ամսվա հրապարակված օրացույցներ: Շուրջտարյա ուսումնական գործունեություն ուսումնական օրացույցով: Ճամբարների, աշխատարանների, ստուգատեսների, հավաքների, փառատոների, համերգների, օրացուցային ուսումնական այլ նախագծերի միջոցով կրթության անընդհատության ապահովում: Ուսումնական կյանքի, գործունեության ծիսականացում: Ծեսի տարածում ուսումնական նախագծերով, հայրենագիտական ճամփորդություններով: Սովորող-սովորեցնող նախագծով շուրջտարյա աշխատանք: Սովորողների, մանկավարժական աշխատողների շուրջտարյա ընդունելության բաց համակարգ՝ Մուտքի ճամբարներով, ներառման նախագծերով: 3. Մանկավարժության լաբորատորիայի համակարգմամբ ուսումնական պլաններով որոշված դասընթացների ծրագրերի մշակումներ կրթահամալիրի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակարգերով, ծրագրերը սպասարկող այլ մշակումներ, կարգերի, նախագծերի լրամշակման աշխատանքներ մասնախմբերում, ուսումնական կենտրոններում:		

			կրեդիտավարկանիշային համակարգի գործիքների լրամշակում: 5. Ավագ դպրոցի սովորողների՝ ուսումնական պլանով որոշված հետազոտական նախագծի իրականացման կարգի, աշխատանքին ներկայացվող պահանջների լրամշակում: 6-8-րդ, 9-րդ դասարանների ուսումնական պլաններով որոշված ուսումնական նախագծի մշակման, կազմակերպման, արդյունքների հանրայնացման կարգերի, ձևերի լրամշակում: 6. Հեղինակային կրթական ծրագրերի մշակման, լրամշակման մեջ ներառված մանկավարժական աշխատողների հմտությունների զարգացման ծրագրերի, նախագծերի, մանկավարժական աշխատողի ընտրության բաց համակարգի լրամշակում, դրա շուրջտարյա գործունեություն: Մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջների լրամշակում: 7. Հեղինակային կրթական ծրագրի ուսուցչի կամավոր ատեստավորման կարգի, բովանդակության լրամշակում, կազմակերպում:	Ուսուցման մեջ ԱԲ գործիքների կիրառման նախագծերի մշակում, փորձարկում, ներդրում: Ուսուցման առկա, հեռավար ձևերի ճկուն համակցում: 4. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ շրջանների ամփոփում նոր և լրամշակված գործիքներով: Կրթական ծրագրերի ելքի ստուգատեսներ. ուսումնական արդյունքների հանրային գնահատման նախագծեր: Սովորողների, մանկավարժական աշխատողների անվանական և այլ մրցանակներ: 5. Հունվար-հունիսին 10-11-րդ դասարանցիների, նոյեմբեր-դեկտեմբերին՝ 12-րդ դասարանցիների հետազոտական նախագծերի հանրային պաշտպանություններ: 9-րդ, 8-րդ, 7-րդ, 6-րդ դասարանցիների նախագծային աշխատանքների կազմակերպում, արդյունքների հանրային ներկայացում: 6. Հեղինակային կրթական ծրագրի աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպում, ինքնակրթության խրախուսում: Ուսումնական օրացույցով որոշված մասնագիտական հավաքների, մանկավարժական ակումբների, աշխատարանների,		

			Հեղինակային կրթական ծրագրով ամենամյա մրցանակների պահանջների, մրցանակակրի առաջադրման, ընտրության կարգի լրամշակում՝ որպես մանկավարժական աշխատողների, սովորողների գործունեության գնահատման գործիքներ: 8. Հանրապետության ուսումնական հաստատությունների համար ծրագրի ընտրության հնարավորությունների ստեղծում: Գործընկերների ներգրավում հեղինակային ծրագրի զարգացման, խնդիրների լուծման աշխատանքներում, կրթահամալիրի մանկավարժական լաբորատորիայի միջոցով կրթահամալիրի աշխատողների մասնակցություն ԿԳՄՍՆ նախաձեռնած հանրային քննարկումներին, կրթության ոլորտի իրավական ակտերի նախագծերի քննարկումներին, վերապատրաստումներին: 9. «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» շարունակական նախագծով քաղաքային միջավայրի	մասնագիտական զարգացման դասընթացների միջոցով հետազոտական հմտությունների, մեթոդական զինանոցի անընդհատ լավացում, գրադարանային ֆոնդի շարունակական զարգացում: Մանկավարժական գարնանային, հունիսյան, օգոստոսյան, աշնանային, ձմեռային բաց ճամբարներ: Բլեյան դպրոցի մանկավարժության փոխանցման անընդհատություն՝ նոր մանկավարժական աշխատողներին մենթորական օգնությամբ ներառելով հեղինակային ծրագրում: Մենթորական լաբորատորիայի շուրջտարյա գործունեություն: 7. Հեղինակային կրթական ծրագրով կամավոր ատեստավորման, մրցանակային անվանակարգերի բովանդակության արտացոլում ուսումնական գործունեության կազմակերպման նորացման վրա: 8. Կրթահամալիրի մասնաշենքերում ցանցի նորացման աշխատանքներ: Անխափան ուսումնական համացանց կրթահամալիրի ողջ տարածքում: 9. Կրթահամալիրի ճարտարապետական արվեստանոցի, սովորողների միջոցով, շենքերի բարեկարգման, «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» նախագծում ընդգրկված տարաքների բարելավման նախագծերի մշակում:		

			բարելավման նախագծերի ստեղծում: 10. Կրթահամալիրի ուսումնական հաստատությունների կանոնադրությունների լրամշակում: Ուսումնական ինտերնետ, թվային ուսուցման որակի, անվտանգության, ուսումնական գործում կապին ներկայացվող պահանջների, օգտագործման, սպասարկման կարգերի լրամշակում: mskh.am ցանցի գործունեություն:	Անհատական-խմբային կապեր, նախագծեր կրթական պարտեզի այլ հաստատությունների մանկավարժական աշխատողների հետ, միասնական նախագծեր:Ուսումնական միասնական տարածքների ստեղծում: 10. Կրթահամալիրի ուսումնական հաստատությունների նոր կանոնադրություններ: «Դպիր» մանկավարժական հանդեսով, բազմալեզու կայքով, ենթակայքերով, սոցիալական մեդիայով, TV-ով հեղինակային ծրագրի ներկայացում-տարածում: Մեդիագրադարանի նոր կայքի փորձարկում, նոր ուսումնական նյութերի, փաթեթների հրապարակման անընդհատ աշխատանք: «Դպիր» հանդեսում մանկավարժական մշակումների, հեղինակային փորձի ներկայացման, ուսումնասիրությունների, թարգմանությունների անընդհատություն: Յուրաքանչյուր մանկավարժական աշխատողը՝ բլոգավար, սովորողների, ստեղծագործական խմբերի, նախագծերի բլոգների խորհրդատու: *Ծրագրի մանկավարժական աշխատողների աշխատավարձ համակարգի պահպանության համար, լրավճարներ վերը նշված*		

				բովանդակության ստեղծման համար: Թվային անհատական միջոցներով, համացանցով, բլոգներով ուսուցման, ուսումնական նախագծերի, սովորողների ընտրությամբ դասընթացների, այդ թվում՝ օտար լեզուների, խորացված ուսուցման, մարզական ակումբների փոքր խմբերով ուսումնական աշխատանքի կազմակերպման, հեղինակային ուսումնական բաց միջավայրի ստեղծման և զարգացման, ուսումնական, մանկավարժական ճամբարների կազմակերպման, այլ ծախսերը կատարվում են սովորողների ուսումնառության պայմանագրերով որոշված ուսումնական վճարներով:		
2	Նախադպրոցական հեղինակային կրթական ծրագրի կազմակերպում:	Կրթահամալիրի դպրոց-պարտեզներում, քոլեջ-պարտեզում 2-4 տարեկանների խմբերի պահպանություն: Դպրոց-պարտեզներում գործող 5 տարեկանների խմբերի գործունեության կազմակերպում հեղինակային ծրագրով:	2-5 տարեկանների խմբերի շուրջտարյա գործունեություն. Արևելյան, Արևմտյան, Հյուսիսային, Հարավային դպրոց-պարտեզներում, քոլեջ-պարտեզում, 2-4 տարեկանների 11 խումբ, մինչև 275 սան: 5 տարեկանների 6 (մինչև 150 սան) խմբերի գործունեություն նախադպրոցական հեղինակային ծրագրով որոշված ուսումնական օրացույցով, աշխատակարգերով, արդյունքների հանրային ներկայացման «ամսիկ» ստուգատեսներով: Կրթական հեղինակային միջավայրի լրացում նոր անկյուններով, սրահներով:	2-5 տարեկանների խմբերում մանկան ինքնուրույնության զարգացման, տեխնոլոգիական, հմտությունների ձևավորման, սոցիալականացման, միջավայրի, կարողությունների ինքնուրույն յուրացման, մանկական ծեսի ամենշաբաթյա, հրապարակված նախագծեր: Հեղինակային նախադպրոցական կրթական ծրագրի տարածում 2-5 տարեկանների դաստիարակների բլոգների, դաստիարակների լաբորատորիայի, «Պարտեզ» բլոգի, վերապատրաստումների, նախադպրոցական այլ հաստատությունների, խմբերի հետ համատեղ իրականացվող նախագծերի միջոցով:	2026թ. ընթացքում	51 743 600

				Բոլոր խմբասենյակներում ընթերցողական անկյուններ: Մասնագիտակաան ուսուցման բազային քոլեջ-պարտեզում մարմնամարզական նոր սրահ, գործիքային երաժշտության լաբորատորիա: *Ծրագրով ապահովվում է 2-4 տարեկանների խմբերի մանկավարժական աշխատողների աշխատավարձ: Սաների սննդի, հիգիենայի, կենցաղի ծախսերը, հեղինակային նյութական, ուսուցողական միջավայրի ստեղծման, զարգացման, երեխայի գործունեության պիտույքների ծախսերը կազմակերպվում են սաների խնամքի և զարգացման պայմանագրերով որոշված ծնողական վճարներով:*		
3	Կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված ուսումնական կենտրոնների պահպանություն: Սովորողների, մանկավարժական աշխատողների օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանություն:	Կրթահամալիրի գեղարվեստի դպրոցի, երաժշտության, ծեսի և ազգագրական պարի դպրոցի, բնասերի դպրոց՝ ուսումնական ագարակի, խաղողի և գինու դպրոցի, դպրոց բնության գրկում՝ Արատեսի դպրական կենտրոնի, մարզադպրոցի, շախմատի, ինժեներատեխնիկական ուսումնական	Ուսումնական կենտրոններում, արվեստանոց-արհեստանոց-լաբորատորիաներում սովորողների, մանկավարժական աշխատողների օժտվածության զարգացման նախագծերի, լրացուցիչ, այդ թվում՝ հանրակրթական, արտադպրոցական կրթական ծրագրերի, սովորողների տնային աշխատանքի, ինքնակրթության նախագծերի կազմակերպում: Ստեղծագործական խմբերի գործունեություն: Ուսումնական ֆլեշմոբների, ստուգատեսների, փառատոների,	Ուսումնական կենտրոններում սովորողների հանրակրթական լրացուցիչ, նախասիրությունների զարգացման դասընթացների, նախագծերի, ակումբների, ստեղծագործական խմբերի, մասնագիտական կողմնորոշման նախագծերի, հետազոտական աշխատանքի, ինքնակրթության նախագծեր: Ամենամսյա ուսումնական ֆլեշմոբներ: Ամենամյա հանրակրթական ստուգատեսներ, այդ թվում՝ հանրակրթական Դիջիթեք, բնագիտատեխնիկական ստեղծագործության, ձմեռային	2026թ. ընթացքում	33 120 000

		կենտրոնների, ստեղծագործական խմբերի, ակումբների պահպանություն:	ճամբարների, այդ թվում՝ արշավախմբային, լողափնյա, բնապահպանական, հայրենագիտական, ռազմամարզական, տեխնոճամբարների կազմակերպում: Հայ-վրացական հանրակրթական կամուրջների զարգացում, հայկական Ստամբուլի հետ կրթական-մշակութային կամուրջների վերականգնում, Իրանում համագործակցային նախագծերի կազմակերպում: Միջազգային ծրագրերի, մրցույթների, նախագծերի մասնակցություն, գործընկերների մասնագիտական, նյութական, կազմակերպական աջակցությամբ համագործակցային նախագծեր: «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի,կրթահամալիրի աշխատողների արհեստակցական կազմակերպության, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի, բուհերի, դպրոցների, բնապահպանական, մշակութային, գիտական այլ կազմակերպությունների, անհատների հետ իրականացվող նախագծեր:	խաղերի, մարմնամարզական, ազգագրական, արտադրությամբ ուսուցման, ընթերցողական, թարգմանական, լրագրողական-հասարակագիտական նախագծերի, տեխնոլոգիական, հայրենագիտական-բնապահպանական նախագծերի, արվեստի, արտ-միջավայրի, երաժշտական, թատերական, կինո-ֆոտոյի-վլոգերության, ազգագրական, հայրենագիտական, «Հարավարևմտյան ֆիլհարմոնիկ», Հակաբացիլ Կոմիտաս, «Սեբաստացու օրեր», «Լույսեր, գույներ, ձայներ, ղողանջներ, ազդեցություններ», շուրջտարյա «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում»: ԲՏՃՄ բնագավառի նախագծերը ստուգատեսային հարթակներներում ներկայացնելու, սովորողների տեխնիկական ստեղծագործության բաց հավաքների նախագծում, կազմակերպում: Կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված հունվարյան, հունիսյան ուսումնական ճամբարներ: Հեղինակային մանկավարժության հանրային ներկայացման մայիսյան, աշնանային ստեղծագործական հավաքներ, նախագծային ուսուցման ստուգատեսներ: Ռազմամարզական, արշավախմբային, հայրենագիտական, բնապահպանական գործունեության նախագծեր, այդ թվում՝ Արատեսում շուրջտարյա, Սևանի ավազանում		

				ամառային լողափնյա ճամբարներ, լրացուցիչ կրթության ճամբարներ գյուղական ճամբարներ: Ուսումնական օրացույցով որոշված՝ • համերգ-ցուցադրություն-ներկայացումներ, • հանդիպում-վարպետության պարապմունքներ, աշխատարաններ. • տեխնոլոգիական հանրակրթություն արտադրությամբ ուսուցման նախագծերով, այդ թվում՝ երկրագործական, կենդանիների և բույսերի խնամքի-բազմացման, խաղողի և գինու արտադրության, մեղվաբուծության, չորանոցի-չրանոցի, ինժեներական-տեխնիկական, սարքաշինության, գործիքաշինության, գյուղատնտեսական մթերքի արտադրության, հացի-հացամթերքի արտադրության, խոհանոցի, մառանի, գրքի թվայնացման, էլեկտրոնային գրքի ստեղծման, ձևավորման, հրատարակման, ծեսի-տոնի կազմակերպման. • մարզական ակումբային բաց մրցաշարարեր, միջազգային հավաքներ. • մանկավարժական աշխատողների մարզական ակումբներ, թիմեր. • մանկավարժության կենտրոնում՝ մանկավարժական շուրջտարյա դպրոցի, մանկավարժական բաց ճամբարների, վերապատրաստման դասընթացների կազմակերպում.		

				մանկավարժական նորարարության բաց հավաքների կազմակերպում, մանկավարժության կենտրոնի միջոցով կրթահամալիրից դուրս. հանրապետական, միջազգային հավաքների մասնակցություն. • Արատեսը՝ դպրոց բնության գրկում, ռազմամարզական, բնապահպանական, հայրենագիտական, ընտանեկան շուրջտարյա ճամբարներ, ամենամյա տեխնոճամբար, բարձր լեռնային պայմաններում մասնագիտական ուսուցման, մեղվաբուծության բազա. • «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանություն» հիմնադրամի, «Արավես» ՀԿ-ի հետ հայրենագիտական, բնագիտական, բնապահպանական նախագծեր, ճամբարներ. • Գեղարվեստի ազգային ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի, անհատ արվեստագետների հետ արվեստի փառատոնի նախագծում, կազմակերպում, կրթական գեղագիտական միջավայրի նախագծեր. • գործուն մասնակցություն քաղաքային, հանրապետական, միջազգային ստեղծագործական հավաքների, համերգների, ցուցահանդես-վաճառքների: Ուսումնական կենտրոնների, ակումբների նախագծերում հանրակրթական այլ		

				հաստատությունների սովորողների ներառում կրթահամալիրի միջավայրում, հեռավար նախագծերով կամ նախագծի տեղայնացմամբ: Հանրակրթական կամուրջներով կրթական փոխանակումների կազմակերպում: Բաց նախագծերին հանրապետության ուսումնական հաստատությունների խմբերի մասնակցություն իրենց հայտերով, հանդիպումների, համերգ-ներկայացումների, պլեներների, հեռավար ուսուցման ծրագրերի, համացանցում անորոշ թվով շահառուներ: Ռազմամարզական, հայրենագիտական-բնապահպանական, արշավախմբային ճամբարների, ստեղծագործական հավաքների ավելի քան 6000 շահառու: *Ուսումնական կենտրոնների ղեկավարների, ստեղծագործական խմբերի, ակումբների ղեկավարների աշխատավարձ:* *Մանկավարժական աշխատողների ամենամսյա լրավճարներ՝ ուսումնական ֆլեշմոբների, ստուգատես-փառատոների, ակումբների կազմակեպման համար: Ուսումնական կենտրոններում ուսումնական հեղինակային նյութական, ուսուցողական միջավայրի, նոր արհեստանոց-արվեստանոց-լաբորատորիայի ստեղծման, պահպանման և զարգացման, լրացուցիչ*		

				ուսուցման խմբերի, անհատական պարապմունքների, երկարացված օրվա ճամբարի կազմակերպման ծախսերը կատարվում են ուսումնառության պայմանագրերով որոշված վճարներով: Ճամբարներում սովորողների սննդի, կենցաղի, տեղափոխման ծախսերը կազմակերպվում են ծնողների միջոցներով, գործընկերների նպատակային հատկացումներով:		
4.	Հանրակրթության չափորոշչի, փոփոխությունների ներդրման աջակցություն: Հեղինակային մանկավարժության՝ մանկավարժական նորարարության տարածման, բլեյան ցանցի ձևավորման գործընկերային նախագծեր	Հանրակրթության չափորոշչի փոփոխությունների փորձարկում: Հեղինակային մանկավարժության գործընկերների՝ ՀՀ ԿԳՄՍՆ, «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի, կրթահամալիրի աշխատողների արհեստակցական կազմակերպության, սեբաստացի շրջանավարտների ընկերակցության, գործընկեր բուհերի, դպրոցների, կազմակերպություններ ի և անհատների հետ նորարարական մանկավարժական	Հանրակրթության չափորոշչի, փոփոխությունների ներդրման աջակցության, բլեյան ցանցի ձևավորման մենթորական աշխատանք. • հանրապետության նախադպրոցական, հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավար, մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ՝ որպես պետական չափորոշչի ներդրմանն աջակցություն հեղինակային կրթական ծրագրով. • ուսումնական հաստատությանը կից նախակրթարանի, ՀՀ կառավարության ծրագրով մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող դպրոցի, կրթահամալիրի, մանկապարտեզի ղեկավար և	• Հանրակրթության պետական չափորոշչի ամբողջական ներդրմանը, հանրապետության դպրոցներում նորարարական նախաձեռնություններին աջակցության պահանջով բլեյան դպրոցի փորձի ներկայացման դասընթացներ մասնակիցների հայտով: Այդ թվում՝ ○ հանրակրթության չափորոշչի փոփոխությունների պարզաբանում, փորձարկման արդյունքների ներկայացում, ○ չափորոշչով որոշված ուսումնական բնագավառներից յուրաքանչյուրի, այդ թվում՝ ԲՏՃՄ, կազմակերպում, ○ ուսումնական օրացույցով ուսուցման կազմակերպում. ○ ուսումնական տարին 12 ամսով կազմակերպում. ○ տեխնոլոգիայի, բնագիտության մոդուլային ուսուցում, ○ ռազմամարզական ճամբարի կազմակերպում.	2026թ. ընթացքում	5 760 000

		ծրագրեր, գիտափորձեր	մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ. • համաձայնեցված նախագծեր ՀՀ Վայոց ձորի մարզում, Հայաստանի այլ բնակավայրերում. • հեղինակային կրթական ծրագրերի շահառուների նախաձեռնությամբ հեղինակային կրթական ծրագրով նախակրթարանի, դպրոց-պարտեզի ստեղծման, ուսումնական նախագծերով գործընկերության համաձայնեցված նախագծեր Երևանում, հանրապետության մարզերում, համայնքներում, դպրոցներում, մանկապարտեզներում, ուսումնական կենտրոններում:	○ 12-րդ դասարանում ուսուցման կազմակերպում. ○ ուսումնական պլանով որոշված ուսումնական նախագծի կազմակերպում, ○ հետազոտական աշխատանքի կազմակերպում. ○ 9-րդ դասարանում մասնագիտական կողմնորոշման կազմակերպում. ○ սովորողի տնային աշխատանքի կազմակերպում. ○ դպրոց-պարտեզից սկսած՝ առողջապահական, ճանապարհային երթևեկության անվտանգության ուսուցման նախագծեր: • Ծրագրային, մենթորական օգնություն հանրապետությունում նոր կառուցված դպրոցների, կրթահամալիրների 5 տարեկանների խմբերին, մանկապարտեզի կարիք ունեցող բնակավայրերում դպրոց-պարտեզի, քոլեջ-պարտեզի ստեղծման նախագծերին: • Մենթորական աշխատանք հանրապետության դպրոցների նախագծային խմբերի հետ նորարարական մանկավարժության ներդրման նպատակով, համատեղ իրականացվող նախագծեր շուրջտարյա դպրոցի կազմակերպման, ուսումնական օրացույցի, ճամբարների կազմակերպման, ուսուցման մեջ		

				առցանց հարթակների ներդրման ուղղությամբ: Համատեղ ճամբարներ կրթահամալիրում՝ Արատեսում, Երևանում, գյուղերում, բնապահպանական, հայրենագիտական նախագծեր, մանկավարժական աշխատողների համար կամավոր վերապատրաստման և մասնագիտական զարգացման պարապմունքներ: • Հեղինակային կրթական ծրագրի շահառուների նախաձեռնությամբ հեղինակային կրթական ծրագրով նախակրթարանի, դպրոց-պարտեզի ստեղծման նախագծերի մշակման աջակցություն: *Ծրագրով ապահովվում է հանրակրթության չափորոշչի, փոփոխությունների ներդրման աջակցության, մանկավարժական նորարարության տարածման համակարգման, վերապատրաստումների համակարգման համար աշխատավարձ: Ծրագրով որոշված աշխատանքներն իրականացվում են կրթահամալիրի ոչ պետական, կրթական ծառայություններից ստացվող միջոցներով, «Սեբաստացիներ» կրթական հիմնադրամի, արհեստակցական կազմակերպության աջակցությամբ, շահառու-նախաձեռնողների,*		

				գործընկերների, ծրագրի այլ աջակիցների նպատակային ներդրումներով:		
Ընդամենը՝						126 383 600

Պատվիրատու՝

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Քաղաք Երևան, Կառավարական 2-րդ շենք,

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 02698732

Հ/Հ 900011005205

Գլխավոր քարտուղար՝ _____ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կատարող՝

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ

Քաղաք Երևան, Ռաֆֆի 57

ՀՎՀՀ 01804186

Հ/Հ 900018003203

Տնօրենի պարտականությունները կատարող՝

_____ Լ.Փաշայան

(ստորագրություն)

Կ.Տ.